

Մնացեալը կարեւոր չէ: Սիջուկեան արշաւանքները լիովին այլափոխեցին ամէն ինչ: Միայն ծովեզերքը կրցաւ մնալ երկար ատեն Յունաց ձեռքը, եւ Տրապիզոն ունեցաւ իւր «Կայսրութիւն»ն անդամ, մինչեւ որ Օսմանեանք տիրեցին ամբողջ այս ծովեզերքին (1461 ին): Եւ այս օրէն կը սկսի բոնի մահմետականացու մը նախ ծովափնեայ քաղաքաց Սիւրմենէ (հին Susurmaena), Օֆ (հին Ophis), Րիզ: (հին Rhizus) եւ Լազաստանի: Այս վերջնոյս մասին կը բաւէ միայն յիշել թէ Լազիկէ (Lazica) անուն կը արուի հին Կողքիսի. եւ երբ Ե—Ջ դարուն անիկայ կռուախնձոր եղաւ Բիզանդեանց ու Պարսից մէջ, այս անուամբ կը նշանակուէր երկիրը՝ Ճորոխի բերնէն անդին¹: Այսու հանդերձ ինդիր չկայ թէ Լազիւրը կանուխէն Ճորոխէն արեւմուտք ալ կը նըստաւին, զլիաւորութեամբ այն տեղն՝ ուր հնագոյնք կը գննն Sanni տոհմը: Անուանս լաւագոյն հնչումն է անագան Բիզանդեանց ալ գրած Tzani, Հայոց «Ճանիք» (Խորենացի եւն), Վրաց՝ Ճանիկ: Պէտք չէ սակայն այս անուան

¹ Հմմտ. Լազիկէի մասին ի միջի այոց՝ Brosset, Additions et Éclaircissements à l'Histoire de la Géorgie (I, 2), Pétersbourg 1851, p. 81—107.